ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
Վ. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Վ. Արտաշատ 04.04.2012թ.

N 6 Ն

# ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼՈՒՍՆԹԱԳ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26 «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին N 54 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 3-րդ բաժնի 18 –րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հաստատությունը ընդունվում են մինչև 6 տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորած խմբերում:

Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան»:

Որոշումը ընդունվեց միաձայն՝

1. Գրիգոր Եսայանը
2. Գեղամ Սարգսյանը
3. Գրիգոր Սարգսյանը
4. Արարատ Միքայելյանը

5. Թորոս Սարգսյանը

6. Հակոբ Սահակյանը

7. Քաջիկ Վարդանյանը

Վ. Արտաշատի գյուղապետ՝ Ա. Ղազարյան